«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ROUND SQUARE

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2022-2023
Մաթեմատիկա (5-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գաուս

Մաղթում ենք հաջողություն:

1. (4 միավոր) $\overline{20*23*}$ հնգանիշ թվի գրառման մեջ $*$–երը փոխարինել այնպիսի թվանշաններով, որ ստացված թիվը բաժանվի 36-ի: Գրել բոլոր հնարավոր թվերը:

2. (4 միավոր) Լուցկու հատիկներով կազմված է $\frac{7}{10}$ կոտորակը հռոմեական թվերով՝ $\frac{\text{VII}}{\text{X}}$: Տեղափոխել մեկ լուցկու հատիկ այնպես, որ ստացվի $\frac{2}{3}$–ին հավասար կոտորակ:

3. (4 միավոր) Երկու ուղղով եռանկյունը բաժանել չորս մասերի, որոնցից երկուսը լինեն եռանկյուն, մեկը քառանկյուն, իսկ մյուսը հնգանկյուն:

4. (4 միավոր) Ընտանիքում կան վեց երեխաներ: Նրանցից հինգը ամենափոքրից մեծ են համապատասխանաբար 2, 6, 8, 12 և 14 տարով: Քանի՞ տարեկան է ամենափոքր երեխան, եթե բոլոր երեխաների տարիքները արտահայտող թվերը պարզ են:

5. (4 միավոր) Եթե թվի մեկ երրորդ մասը բաժանենք նրա մեկ տասնյոթերորդին, ապա մնացորդում կստանանք 100 : Գտնել այդ թիվը: